

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1**

ք. Երևան

« 19 » դեկտեմբերի 2017 թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Մնացականյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերակառուցյի վերակառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում մինչև 2018 թվականի հուլիսի 15-ը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4.2 Հավելվածում:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը (այսուհետ՝ պայմանագրի ընդհանուր գին) կազմում է 145 177 770 (մեկ հարյուր քառասունհինգ միլիոն մեկ հարյուր յոթանասունյոթ հազար յոթ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, որից 24 196 295 (քսանչորս միլիոն մեկ հարյուր ինսունվեց հազար երկու հարյուր ինսունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: 2017 թվականի համար նախատեսված գումարը (այսուհետ՝ պայմանագրային գին) կազմում է 68 560 200 (վաթսուներեք միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որից 11 426 700 (տասնմեկ միլիոն չորս հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրային գնից մինչև 68 560 200 (վաթսուներեք միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրային գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ԼԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված պայմանագրի ընդհանուր գինն է.

ԼԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

Սույն պայմանագրով ՄԳ/ԼԳ=0.877924

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված տվյալ տարվա ընթացքում հատկացված ֆինանսական միջոցների 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ

Ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 (վեց) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Կառավարությանն առընթեր  
քաղաքաշինության պետական կոմիտե  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,  
կառավարական տուն 3  
«Ֆինանսների նախարարության աշխատակազմի  
գործառնական վարչություն  
Հ/Հ 900011015972  
ՀՎՀՀ 02565827

### Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ

«Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ  
ք. Գավառ, Անդրանիկի 5  
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 115001487111107  
ՀՎՀՀ 08404037

Աշխատակազմի ղեկավար՝



Ա. Մկրտչյան

Գործադիր տնօրեն՝



Հ.Մնացականյան

Կ.Տ.

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ\***

**ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՎԵՐՆԱԿԱՌՈՒՅՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**

NN	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Վերնահարկի վերակառուցման համաշինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Առկա թիթեղյա տանիքաձածկույթի քանդում	մ <sup>2</sup>	1045.000	0.128	133.46
2	Տանիքաձածկույթի տակ փայտամածի քանդում /1045մ <sup>2</sup> /	մ <sup>3</sup>	47.000	28.278	1329.04
3	Ջերմամեկուսիչ շերտի քանդում ապակեբամբակից	մ <sup>2</sup>	297.000	0.508	151.00
4	Գիպսակարտոնի երեսապատի քանդում	մ <sup>2</sup>	255.000	0.288	73.36
5	Կանոնավոր ձևի տուֆ քարից պատերի քանդում	մ <sup>3</sup>	110.000	15.444	1698.88
6	Առկա պատուհանների քանդում գոգերով	մ <sup>2</sup>	17.500	2.645	46.28
7	Լամինատե հատակների քանդում	մ <sup>2</sup>	215.500	0.591	127.38
8	Բետոնե հարթաշերտի քանդում 215,5x0,05	մ <sup>3</sup>	10.800	20.314	219.39
9	Ջրթող խողովակների քանդում ձևավոր մասերով, ձագարներով	գմ	201.000	0.136	27.35
10	Շին.արբի իջեցում, դուրս բերում բարձում ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 13կմ	տն	155.700	4.175	650.04
11	Պիտանի նյութերի /փայտանյութ, պատուհաններ/ պահեստավորում՝ հանձնում պատվիրատուին տեղափոխում պահեստային տարածքներ	տն	0.300	3.134	0.94
	Միաձույլ ե/բետոնե, մետաղական կոնստրուկցիաներ				
12	Միաձույլ ե/բ գոտու պատրաստում B30 դասի բետոնից (28,6+4,6)մ <sup>3</sup>	մ <sup>3</sup>	33.200	81.022	2689.94
13	A500C d=18մմ ամրանի արժեքը	տն	1.920	353.777	679.25
14	A500C d=14մմ ամրանի արժեքը	տն	0.387	353.777	136.91
15	A500C d=20մմ ամրանի արժեքը	տն	0.020	353.777	7.08
16	A240C d=8մմ ամրանի արժեքը	տն	0.833	360.997	300.71
17	Մետաղական կարկաս 200x200x10մմ, 200x200x8մմ խողովակներից սյուների տեղադրում	տն	6.200	83.175	515.68
18	200x200x10մմ խողովակի արժեքը	գմ	26.300	25.537	671.62
19	200x200x8մմ խողովակի արժեքը	գմ	102.200	20.845	2130.40
20	40x40x2մմ, 80x60x4մմ մետաղական խողովակներից ճակատային էլեմենտների և կանգնակների տեղադրում	տն	0.420	83.175	34.93
21	40x40x2մմ խողովակի արժեքը	գմ	41.000	0.971	39.80
22	80x60x4մմ խողովակի արժեքը	գմ	40.300	3.249	130.93
23	200x120x8մմ մետաղական խողովակներից հեծանների տեղադրում	տն	9.496	79.474	754.68
24	200x120x8մմ խողովակի արժեքը	գմ	260.000	15.036	3909.43
25	Ճակատային ներդիր դետալներ 100x63x6մմ անկյունակներից	տն	0.646	330.677	213.62
26	100x63x6մմ անկյունակների արժեքը	գմ	85.800	3.600	308.87
27	50x50x4մմ անկյունակից և 10ԵՄ1 տավրից ներդիր դետալների տեղադրում սյուների հատվածում	տն	0.047	330.677	15.54

1	2	3	4	5	6
28	50x50x4մմ անկյունակի արժեքը	զմ	3.600	1.456	5.24
29	10BT1 տավրի արժեքը	տն	0.036	467.852	16.84
30	Ներդիր էլեմենտների տեղադրում թերթապողպատից 10մմփ36մմ (պլունային հատվածներում)	տն	2.362	825.249	1949.24
31	200-50-2 սառնաձկված ցինկապատ թեթև պրոֆիլներից մարդակների (հեծանների) տեղադրում (այդ թվում ճակատային մասերի) (5524+413)կգ	տն	5.940	859.228	5103.81
32	89-50-12 սառնաձկված ցինկապատ թեթև պրոֆիլներից մարդակների (հեծանների) տեղադրում	տն	0.184	859.228	158.10
33	Օգտագործվող հեղույս, մանեկ, տափօղովակ	տն	0.350	1256.703	439.85
34	Մետաղական մակերեսների (ոչ ցինկապատ) 2 շերտ լուղաներկում	տն	19.300	35.935	693.55
	Աջակողմյան հատվածի միաձույլ է/բետոնե և մետաղական կոնստրուկցիաններ			0.000	0.00
35	Առկա կողավոր ծածկի սալերի ուժեղացում B15 դասի է/բետոնից, է/բ գոտիներով	մ <sup>3</sup>	15.800	98.666	1558.93
36	A500C d=8մմ ամրանի արժեքը	տն	6.520	357.387	2330.16
37	A500C d=12մմ ամրանի արժեքը	տն	0.192	353.777	67.93
38	A240C d=6մմ, d=8մմ, ամրանի արժեքը	տն	0.145	360.997	52.34
39	Միաձույլ է/բ պատերի պատրաստում B-15 դասի բետոնից /է/բ Պ-1, Պ-2, Պ-3/	մ <sup>3</sup>	24.500	77.363	1895.39
40	A500C d=12մմ ամրանի արժեքը	տն	0.880	353.777	311.32
41	A500C d=14մմ ամրանի արժեքը	տն	0.065	353.777	23.00
42	A500C d=8մմ ամրանի արժեքը	տն	0.477	357.387	170.47
43	A240C d=6մմ, d=8մմ, ամրանի արժեքը	տն	0.150	360.997	54.15
44	Ներդիր էլեմենտների տեղադրում 100x100x6մմ անկյունակներից և 200x12մմ թերթապողպատից	տն	0.871	330.677	288.02
45	100x100x6մմ անկյունակի արժեքը	զմ	75.000	4.458	334.32
46	200x12մմ թերթապողպատի արժեքը	տն	0.114	494.567	56.38
47	Միաձույլ թեթև բետոնից պատի պատրաստում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	22.500	64.778	1457.50
48	20ամ հաստությամբ բետոնե բլոկներից պատի շարվածք /47,1մ2/	մ <sup>3</sup>	9.420	23.182	218.38
49	Շարվածքի ամրանավորում A240C d=6մմ	տն	0.188	438.834	82.50
50	Շարվածքի վերին միաձույլ է/բ գոտու պատրաստում B25 դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.600	77.735	46.64
51	A500C d=12մմ ամրանի արժեքը	տն	0.057	353.777	20.17
52	A240C d=6մմ, ամրանի արժեքը	տն	0.016	360.997	5.78
	Տանիքի մետաղական կոնստրուկցիաններ				
53	100x100x4մմ մետաղական խողովակներից պլունների տեղադրում	տն	0.830	83.175	69.04
54	100x100x4մմ խողովակի արժեքը	զմ	63.500	4.731	300.39
55	150x80x6մմ, 100x60x4մմ, 80x60x4մմ ուղղանկյուն խողովակներից հեծանների (պարզունակներ, թեքաններ) տեղադրում	տն	3.400	79.474	270.21
56	150x80x6մմ խողովակի արժեքը	զմ	40.500	8.083	327.38
57	100x60x4մմ խողովակի արժեքը	զմ	106.000	3.717	393.98
58	80x60x4մմ խողովակի արժեքը	զմ	247.000	3.210	792.87
59	Ներդիր էլեմենտների տեղադրում 100x6,5մմ, 100x63x5մմ անկյունակներից և 4փ8մմ հաստությամբ թերթապողպատից	տն	0.262	330.677	86.64
60	100x6,5մմ անկյունակի արժեքը	զմ	2.600	4.834	12.57
61	100x63x5մմ անկյունակի արժեքը	զմ	5.300	3.002	15.91

1	2	3	4	5	6
62	Թերթապողպատի արժեքը	տն	0.196	494.567	96.94
63	Տանիքաձածակույթի տակ 35x3մ մետաղական խողովակներից կավառամածի պատրաստում	տն	2.168	79.474	172.30
64	35x3մ խողովակի արժեքը	գմ	750.000	1.219	914.26
65	80x60x4մ մետաղական ուղղանկյուն խողովակներից պատին կից հատվածի հեծանների տեղադրում	տն	0.100	482.321	48.23
66	50x4մ անկյունակից ծայղաեզրային հատվածի կցադիրի ներդիրի տեղադրում	տն	0.108	330.677	35.71
67	50x4մ անկյունակի արժեքը	գմ	35.300	1.456	51.38
68	Մետաղական մակերեսների 2 շերտ յուղաներկում	տն	7.100	35.935	255.14
	Ճարտ. շինարարական մաս				
69	Երկշերտ գ/կարտոնով 150մմ հաստ միջնորմների կառուցում ցինկապատ պրոֆիլի ստատներով ապակեբամբակե ձայնամեկուսիչ շերտով	մ <sup>2</sup>	146.000	10.546	1539.65
70	Միաշերտ գ/կարտոնով 100մմ հաստ միջնորմների կառուցում ցինկապատ պրոֆիլի ստատներով ապակեբամբակե ձայնամեկուսիչ շերտով	մ <sup>2</sup>	237.000	7.249	1717.96
71	Կրող կոնստրուկցիաների երևացող հատվածների երեսապատում 2 շերտ հրակայուն գ/կարտոնով	մ <sup>2</sup>	33.800	6.736	227.68
	Բացվածքներ /վիտրաժներ, դռներ/				
72	Ալյումինե պրոֆիլներից ապակեպատ դռան տեղադրում պրոֆիլ E45սերիայի /3,4x2,4/x2	մ <sup>2</sup>	14.400	84.473	1216.42
73	Բարձրորակ փայտից խուլ դռան տեղադրում /1x2,4/x14	մ <sup>2</sup>	33.600	85.834	2884.01
74	/ՎԱԱ/ արտաքին ֆասադային վիտրաժի տեղադրում հունական ալյումինե պրոֆիլ E45սերիայի ջերմակամրջակով /SOLAR SYSTEM/	մ <sup>2</sup>	129.000	148.153	19111.77
75	Բացվող մասերի մեխանիզմի արժեքը	հաստ	28.000	63.550	1779.40
76	Պատուհանագոգերի տակ ե/բետոնե պատի ջերմամեկուսիչ շերտի պատրաստում կոշտ 50մմ հաստ պենոպոլիուրետինից /h-45սմ/	մ <sup>3</sup>	0.550	39.429	21.69
77	Պենոպոլիուրետինի արժեքը	մ <sup>2</sup>	11.000	3.411	37.53
78	Միջնորմների շարվածք 10սմ հաստ թեթև բետոնե բլոկներից	մ <sup>2</sup>	11	4.238	46.62
79	Շարվածքի ամրանավորում A240Փ6մմ	տն	0.02200	438.834	9.65
80	Ջերմամեկուսիչ շերտի քողարկում 10սմ հաստ պ/բլոկե շարվածքի 50մմ հաստ պենոպոլիուրետինից /h-45սմ/	մ <sup>3</sup>	0.550	39.429	21.69
81	Պենոպոլիուրետինի արժեքը	մ <sup>2</sup>	11.000	3.411	37.53
82	20սմ հաստ պատի ջերմամեկուսիչ շերտի պատրաստում կոշտ 80մմ հաստ պենոպոլիուրետինից	մ <sup>3</sup>	4.064	39.429	160.24
83	Պենոպոլիուրետինի արժեքը	մ <sup>2</sup>	50.800	5.185	263.42
84	20սմ պատի երեսապատում գ/կարտոնով	մ <sup>2</sup>	47.200	7.503	354.13
